

Հասած էինք Էթուալ: Ես փափաքեցայ բաժնուհիլ իրմէ, սակայն մեկնումէս առաջ ուրիշ իղձ մը ունեցայ. հաւատացէք, եթէ քաղաքակրթութիւնը վարտիկ շապիկ ըլլար, անմիջապէս պիտի հանուէի Էթուալի հրապարակին վրայ ու, Ադամի նման մերկանդամ, պիտի նետուէի Նիամ-Նիամցի «վայրենի»ին վրայ... համբուրելու համար զինքը: Համբուրելու իր չորս սանթիմ կախ շրթներէն:

Նիամ-Նիամցին առաջարկեց, որ ընկերանամ իրեն մինչեւ սրճարան մը, ուր Եւրոպացիի մը հետ ժամադրուած էր: Ընկերացայ:

«Վայրենի»ին կապարճը պարպուած չէր:

Եւրոպացիին քով ալ շարունակեց նոյն նիւթը՝ ի մէջ այլոց յայտարարելով.

-Մենք՝ վայրենիներս, դուրսէն սեւ ենք, սակայն, ներսէն՝ սպիտակ: Իսկ դուք դուրսէն ճերմաք էք ու ներսէն սեւ:

-Վայրենիներս սատանայի պատկերով հրեշտակներ ենք (անկեալ, եթէ կ'ուզէք), դուք, սակայն, Աստուծոյ պատկերով շինուած սաղայելներ էք: Գայլեր՝ գառան մորթով:

-Դուք հանճարեղ էք ու տիւմարութիւններ կը գործէք, մենք յիմարներ ենք ու իմաստութիւնը կը գործադրենք:

-Մենք կ'ուտենք, երբ անօթի ենք, մինչդէռ դուք կ'ուտուիք, երբ անօթի էք ու կ'ուտէք, երբ կուշտ էք:

Ինչ բարբարոս...անկեղծութիւն:

Եւրոպացի բարեկամը ոտքի ելաւ ու պլլուեցաւ «վայրենի»ին՝ զայն համբուրելով 41 աստիճան ջերմութեամբ:

Եթէ արձանագործ ըլլայի, «վայրենի»ին ու Եւրոպացիին գիրկընդխառնումին արձանը պիտի շինէի՝ տակը գրելով.

*-Քաղաքակրթութեան զոյգումը:*